# ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻՐԱՒՈՒՆՔ

# ԱՇԽԱՏԱՆՔ

ՀՈՂ — ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ

Թիֆլիզում հատով՝ 7 կ. ԱՌԱՋԻՆ 1906 ՏԱՐԻ Այլ տեղերում գինն է՝ 8 կ.

№ 4 ԿԻՐԱԿԻ 12-ԻՆ ՓԵՏՐՈՒԱՐԻ № 4


## ՀՈՂԸ

—

Հող...

Չկայ աշխարհիս երեսին մի ուրիշ բան, մի ուրիշ հարստութիւն, որի հետ կապուած լինեն այնքան շահեր, որպէս հողն է։

Հողի պատմութիւնը—դա իսկապէս մարդկութեան պատմութիւնն է։

Պատերազմ, արիւն, կոտորած, զօրք, թագաւոր, թնդանօթ, նաւեր, բոլորը հողի համար, հողի պատճառով։

Մի մարդ, մի հասարակութիւն, քաղաք, պետութիւն, դա միենոյն է, եթէ ցանկանում է հաստատուն անել իր գոյութիւնը, ապրուստը, նա մտածում միայն մի բանի մասին. որքան կարելի է շատ հող ձեռք բերել, հաստատուել նրա վրայ, տէր դառնալ նրան և օգտուել նրանից։

Եւ այդ ձգտումը, այդ ցանկութիւնը դէպի հողը, շուռ է տալիս մարդկութիւնը, որոշում է նրա բաղդը, վիճակը, նրա ներկան, նրա ապագան։

Բայց ո՞վ է այդ մեծ հարստութեան տէրը—նա ով որ աւելի ուժեղ է։

Ո՞վ է օգտուում հողից—նա ով աւելի հարուստ է, աւելի ճարպիկ է։

Իսկ ովքեր են այդ հողի վրայ աշխատում, քրտինք թափում, նրան մշակում—նրանք, ովքեր ամենից աղքատ են, աւելի ճնշուած։ Բաւական է ասել, որ հներում հողագործները մարդկանց հաշւին չէին, նրանց համարում էին ցածր դասակարգ. և հողագործները զրկուած էին բոլոր իրաւունքներից, նրանց թողնուած էր մի հատիկ իրաւունք—դա միշտ աշխատելու, միշտ չարչարուելու իրաւունքն էր։

Իսկ ո՞վ տուեց մարդկանց, այդ ուժեղներին հողը, իրաւունք, և նրանից ստացած հարստութիւնը։

Ոչ ոք—բոլորը խլեցին ուժով, զօրով, զօր-

digitised by A.R.A.R.@

քով, պատերազմով, թնդանօթով և շատ անգամ փողով։

Եւ հողի տէրերը երբեմն այնքան բարի, մեծահոգի և ողորմած էին գտնւում, որ հողը բաժանում, նւիրում էին նրանց, ովքեր նրանց մօտիկ էին կամ նրանց, որոնք մի ծառայութիւն էին մատուցանել։

Թագաւորը առաջին հողեր էր նւիրում իր իշխաններին, զօրապետներին, իր սիրելիներին, ազգականներին, որոնք նւիրում էին իրենց սիրելիներին, ժառանգներին. և ահա հողը ձեռքից ձեռք էր անցնում, տէրից տէր և նրա հետ միասին տէրից տէր էին անցնում աշխատաւորների առաջին մի բազմութիւն, որ ապրում էր այդ հողի վրայ. մշակում էր հողը և հարստութիւններ էր դիզում հողի տէրերի համար։

Վերջը հողը դարձաւ առևտրի առարկայ. մէկը ծախում էր միւսին, երրորդը չորրորդին այնպէս որպէս ծախում էր մի կով, մի մատանի, մի խալիչայ, մի գործիք...

Բայց ո՞ւմն էր այդ հողը, ո՞վ էր նրան ստեղծել։

Ոչ ոք, հողը չունէր տէր. նա ինքնաստեղծ էր, այնպէս որպէս ստեղծւած է օդը, լոյսը, ջերմութիւնը,

Հողը մի բարիք էր, որ ստացել էինք մենք բնութիւնից, որի իսկական տէրը Աստուած էր։

Հողը ոչ ոքի չպէտք է պատկանի ասում է մարդկութեան 9/10 երորդ մասը։

Չպէտք է պատկանի, որովհետև նա մարդու ստեղծածը չէ, այլ նա մի նւէր է բնութիւնից, տւած մարդկութեանը, որպէս զի նա աշխատի, մշակի նրան և հողից ստացած արդիւնքով ապրի, իր գոյութիւնը պահպանի։

Հողը չէ կարող սրա կամ նրա սեփականութիւնը դառնալ, որպէս և օդը, լոյսը, անձրևը, ձիւնը և բնութեան բոլոր բարիքները։

Հողից կարելի է միայն օգտւել և բոլոր այն մարդիկ, որոնք մշակում են հողը, չարչարւում հողի վրայ, աշխատանք թափում՝ ահա դրանք են հողի իսկական տէրերը՝ ուրիշ ոչ ոք։

Սա աշխատաւորի, հող մշակողի տրամաբանութիւն է. մի պարզ, հասկանալի և շատ բնական ու արդարացի տրամաբանութիւն։

Եւ ահա այդ պարզ, այդ հասկանալի, այդ բնական, այդ արդար իրաւունքն է որ, այս օր աւելի քան մի ուրիշ բան [illegible] է եղած։

Այժմ հողի տէրեր նրանք են, որոնք ամենից քիչ կամ բոլորովին իրաւունք չունեն տէր համարելու, որովհետև հողի այժմեան տէրերից շատ քչերն են, որ հող են մշակում, նրա վրայ աշխատանք թափում. Ուժեղները, հարուստները խլել են այդ հողը, առել են իրենց ձեռք-օգտւում են նրանից, հարստութիւններ են դիզել այն ինչ իսկ հողի արդար տէրը աշխատաւորը աղքատ է, քաղցած, մերկ և իրաւազուրկ։

Եւ այդ հարուստները, այդ ուժեղներն են որ ստեղծել են օրէնքներ, ուր ասւած է թէ ում պէտք է պատկանի հողը, ով է նրա տէրը։

Իսկ այդ օրէնքների մէջ մոռացւած են նրա արդար տէրերը աշխատաւորները։

Բայց այս այսպէս չի թողնւելու. կգայ մի օր և նա հեռու չէ, երբ դուրս կգան հողի իսկական իրաւատէրերը, և նրանք են, որ կլինեն հողի մասին օրէնքներ գրողները. ահա այն ժամանակ ամեն ինչ կփոխւի և աշխարհիս երեսին կթագաւորի արդարութեան մեծ օրէնքը։

Այդ օրը հեռու չէ. նա գալիս է...

Գալիս են հողի իսկական տէրերը...

Ա. Ա.

---

## ՎԱՐԻՉԻ ԵՐԳԵՐԻՑ

Մենք արհամարհւած զաւակներ կեանքի,
Շւայտ բարքերի դռներն ենք ծաղրած.
Կարիքի գրկում, ծանր աշխատանքի
Երկաթէ լուծը մեր վզին ընկած...
Մենք-խորթ եղբայրներ բաղդաւոր մարդկանց,
Ունեւորների ծաղրն ու ծանակ,
Տառապոտ ճամբան կտրում ենք ամբողջ
Ու չարքաշ կեանքը, չարքաշ ժամանակ...

Նայեցէք այնտեղ... բախտաւորներին...
Անհոգ, անկարեկիր հրճւում են նրանք.
Կեանքն այնտեղ պար է, երգ է մոլեգին,
Ճռայլ գիշերներ՝ հանդէս ու խրախճանք...
Ահա խնջոյքի սեղանը փարթամ,
Կեանքը՝ վավաշոտ, անվերջ օրգիաներ,
Կերը ու գեղխութիւն. գինի անուշհամ,
Ու զրնգզրնգում են ոսկեայ բաժակներ...

digitised by A.R.A.R.@

Այնտեղ վատնւում են ջլուտ բանւորի
Քրտինքով ստեղծած բարիքներն առատ,
Ու ծաղրւում կոչումն աշխատաւորի,
Ու ոտնահարւում պատիւն անարատ…

—

Գարշ հոտ է փչում նրանց բարքերից,
Ու նրանք չունին հոգսեր ու վէրքեր…
Լեղի չէ կաթում նրանց սրտերից,
Ուտում են, խմում, երգում սին երգեր…
Մի կաթիլ քրտինք նրանք չեն թափած,
Ի՞նչ է չգիտեն ծանր աշխատանք.
Ու տափմա կեանքի գրկումը հարբած՝
Մեր գլխին անվերջ թափում են լուտանք…
Մեր արդար վաստակը վատնում են անհա,
Մենք աշխատում ենք լափում են նրանք.
Ու դարձել մենք խեղճ, մեր վզին՝ շղթայ,
Ու մեր բաժինը՝ կարիք, չարչարանք…

—

Մենք՝ ըմբոստ որդիք… մենք բանւոր մարդիկ,
Մեր կեանքն՝ աշխատանք ու կռւի պայքար.
Ու մաքառում ենք մենք քաջամարտիկ,
Զգտելով յաւէտ ապրելու համար…

ԱՐԱԲԻ

## ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՑԱՒԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Գիւղ. դա մի մութ աշխարհ է, մի մեծ աշխարհ, լի կեանքով, կեանքի բազմատեսակ հոգսերով։ Բայց դա նաև մի հետաքրքիր աշխարհ է մի «Մոռացւած աշխարհ»։

Նա ով ապրել է գիւղում անմիջական շփում է ունեցել գիւղացիների հետ նա գիտէ թէ ինչ է գիւղը.

Այդտեղ, այդ ցեխոտ փողոց, արտաքուստ տգեղ խրճիթների մէջ ապրում է նոյն կեանքը ինչ և քաղաքներում միայն ի հարկէ փոքր չափերով։

Այստեղ է նախ և առաջ ինքը գիւղի տէրը, նրա պաշտօնական ներկայացուցիչը «գլաւինը» ստարշին են կամ նրա օգնական տանուտէրը։

Վերին՝ իր իշխանութեան արտաքին նշանը՝ շըղթան, ցէպը, մնջիլը, ձեռքին՝ մահակը իշխանութեան այս գայիսոնը կամ թէ մորակը։ Գիւղի «գլաւինը» դա մի խոշոր անձնաւորութիւն է, որովհետև նախ նա պաշտօնական ներկայացուցիչ է մի քանի գիւղերի գիւղական հասարակութիւնների և ապա գլաւին անպայման պէտք է լինի իր շրջանում յայտնի, ուժեղ, հեղինակութիւն ունեցող մարդ «զմբուզի մարդ» ինչպէս ասում են գիւղերում։ «Գլաւային» տունը դա մի հիմնարկութիւն է, ուր գիշեր ցերեկ դիմում են մարդիկ, անթիւ անհամար խնդիրներով, միջնորդութիւններով։ «Գլաւնու մօտ դատարկաձեռն գնալ ընդունւած չէ։ Նայելով խնդրի յատկութեանը փոքր կամ մեծ են լինում նւէրները, սկսած մի տասնեակ ձուից, ճուտից մինչև մի թուլքի ոչխար, կամ մի «ռըսի գլուխ» շաքար, դա գլաւայի տեսութեան անհրաժեշտ այցետոմսերն են։

Գլաւին բոլորին պէտք է ճանաչի, և նա ճանաչում է, որովհետև բոլոր գիւղացիք կէ կամ նրա ընտրողներն են կամ նրա հակառակորդները։ Նա գիտէ ինչպէս վերաբերւել առաջիններին, ինչպէս՝ երկրորդներին։

Սովորաբար դէպի երկրորդները նա ունի որոշ խաղախախմութիւն։

Սրանց, մանաւանդ եթէ փոքր ի շատէ ազդեցութիւն ունեցողներ են, ընդունում է գլաւին սիրալիր, բայց պահպանելով իր արժանապատւութիւնը

Երբէք չի ցոյց տալիս, որ նա իր հակառակորդն էր, այլ մտածում է թէ ինչպէս անի որ մօտակայ ընտրութիւնների ժամանակ սրա ձայնը շահի։ Ահա այս քաղաքականութիւնն է, որ հնարաւոր է դարձնում գլաւաի վերընտրութիւնը, ուստի որքան «պօլիտիկ» է գլաւին այնքան երկար նա գլաւութիւն է անում։

Գալով խրխաններին նա սրանց վերաբերմամբ աւելի պարզ է և անկեղծ. նա գիտի որ սրանք իրանն են, և դրա համար նա շատ էլ չէ ուշք դարձնում թէ ինչ են մտածում իր մասին իր կողմնակիցները։

Սովորաբար, ամենից շատ ծեծ ուտողները սրանք են լինում և տարօրինակն այն է, որ կողմնակիցը չի նեղանում, երբ իր գլաւին իրեն ծեծում է։ Դա համարւում է արդարութեան, անկողմնապահութեան նշան, և ծեծ կերած կողմնակիցը մի կամ մի քանի օրից հրաւիրւում է գլաւիի մօտ մի թաս արաղ խմելու, թէյ անուշ անելու և այլն։

Գլաւին, ստարշինը, գիւղական հասարակութեան ժողովրդականութիւն, անուն ունեցող մարդ է, ուստի և նա մեծ մասամբ ունևորներից է լինում, նոյն իսկ հարուստներից։

Ուրիշ կերպ չի էլ կարող լինել, որովհետև գլաւի լինելու համար պէտք է անսպառ փող բաժանել, կերուխումներ ունենալ, հարբեցնել, զանազան խոստումներ տալ և կատարել, մի խօսքով պէտք է ձայն շահել. իսկ իր ձայնը գիւղացին շատ էլ էժան գնով չէ ծախում։

Ես գիտեմ գլաւաներ, որոնց ընտրութիւնը նստել է նրանց վրայ մի քանի հազար ռուբլի, իսկ հարիւրներ մսխելը դա սովորական և անհրաժեշտ մի երևոյթ է։

Գլաւիի ընտրութիւնը դա մի ահագին, վերին աստիճանի հետաքրքիր և բարդ պրոցէս է, ես ի հարկէ աչքի առաջ ունիմ ոչ թէ իսկական ընտրութիւնը, այլ նախընտրողական պայքարը։

Այստեղ կայ ամեն բան և՛ ծրագիր, և՛ պրոպա-

digitised by A.R.A.R.@

զանգույ, և կապեր և քաղաքականութիւն, և կաշառքը և ույժ և խոստումներ։

Ընտրութեամբ հետաքրքրւում են ոչ միայն այն գիւղերը, որոնք մասնակցելու են ընտրութիւններին, այլ նաև այդ շրջանի միւս հարևան գիւղերը։

Պայքարը սկսւում է ընտրութիւններից մի քանի ամիս առաջ։

Այդ շրջանում գյուղն այլևս անկարող է պարա-պել իր առօրեայ տնտեսական գործերով, ապրան-քներով և այլն։

Նա առաւօտից մինչև ուշ գիշեր իր ձիան վրայ է։ Մտնում է այս գիւղը, միւսը, երրորդը, անցնում է գիւղերի ազդեցիկ մարդկերանց մօտ խօսում է, համո-զում է, պարտաւորում է և քննադատում է իր հակառա-կորդին, դաւեր է սարքում նրա դէմ, ժպտում, հիւրա-սիրում է կողմնակիցներին, խոստումներ է տալիս իրեն դիմողներին, և վերջապէս, եթէ նա համոզուած չէ որ կընտրուի դիմում է իր իշխանութեան օգնու-թեանը պրիստաւի, գաւառապետի, նրա օգնականի։

Այս վերջինները ջերմ մասնակցութիւն են ըն-դունում ընտրութիւնների մէջ նայելով այն բանին թէ ինչ յարաբերութեան մէջ է եղել գիւղը իրենց և իրենց ընտանիքի հետ։

Այստեղ այլ ես հացով, ձուով, գառով չես պրծնի։

Հարկաւոր է ոսկի, փող, ձի, կով, փթերով իւղ, բրինձ և այլն և այլն։

Եւ այսպէս գիւղի ընտրութեան ագիտացիային մասնակցում են բոլորը, սկսած գիւղական[1] համբալից, պրոլետարից մինչև ինքը գաւառապետը։

Գիւղում գլխից յետոյ ամենաուժեղ դեր կա-տարողը գիւղական բիւրոկրատիան է և դրա մէջ «գրա-գիրը» «պիսարը»։

Դրա մասին այլ անգամ։

ՄԱՃԿԱԼ

---

## Ի՞ՆՉ Է ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ.

### V

Այժմ նայենք ինչ բան է ոստիկանական պետութիւնը, ինչ առանձնայատկութիւններ ու-նի նա և ինչու ոստիկանական անուն է ստացել։ Ոստիկանական պետութեան մէջ պետական բարձ-րագոյն իշխանութիւնը պատկանում էր թագա-ւորին։ Նա ինքն էր հաստատում օրէնքները, սահմանում տուրքեր և հարկեր, նա է նշանա-կում նախարարներ (մինիստրներ) և դատաւորներ։

Թագաւորի ձեռքում կային բոլոր երեք իշ-խանութիւնները՝ օրէնսդրական, կառավարական և դատաստանական։ Թագաւորի կամքը—ամենա-բարձր օրէնքն է։ Երկրի բոլոր բնակիչները հնա-զանդւում են նրան։

Ոստիկանական պետութեան մէջ թագաւորի ամենամեծ հոգսը իր իշխանութիւնը պահպանե-լու և նրան հաստատելու մասին է։

Պետութեան մէջ ապրողները զուրկ էին է-ական իրաւունքներից—նրանք միայն հաւատարիմ հպատակներ են՝ պարտական առանց այլևայլու-թեան հպատակուել թագաւորի կամքին։

Հպատակի իւրաքանչիւր քայլը պէտք է լինի իշխանաւորների թոյլտուութեամբ։ Այն բանը, որ թագաւորական օրէնքներով թոյլատրուած չէ—նա արգելուած է։

Թագաւորները ձգտում էին միշտ խառնուել ժողովրդի կեանքի բոլոր գործերի մէջ։ Եւ որով-հետև մի մարդու համար անհնարին է ամեն ինչ տեսնել, ամեն բանի հասնել, ուստի թագաւորները չափազանց շատացնում էին պաշտօնեաների, որպէս գաղտնի նոյնպէս և յայտնի ոստիկանների թիւը։

Թագաւորները խառնւում էին բնակիչների տնտեսական կեանքի մէջ և նոյն իսկ նրանց անձնական, ընտանեկան գործերի մէջ։ Թագա-ւորները աշխատում էին առաջնորդել ժողովրդի արդիւնաբերական, առևտրական և գիւղատնտե-սական կեանքը, գործերը։ Իսկ այս բոլորի հա-մար պէտք էր ծառայողների ահագին մի թիւ։ Մի խօսքով, ոստիկանական պետութեան մէջ ժողովրդի կեանքը ամբողջովին կաշկանդուած էր որպէս շղթաներով, թագաւորի սահմանած օրէնք-ներով։

Արգելումների մի ահագին ցանց կաշկանդում է հպատակների շարժումը։ Ամենուրեք կար մի որ և է իշխանութիւն, որը հաւանութիւն է տա-լիս, թոյլատրում է, արգելում է, հսկում է. և պաշտօնեաների ու ոստիկանների այս ահագին բանակի կերակրելը մեծ գումարներ են նստում, ի հարկէ, ժողովրդի գրպանից։ Իսկ ա-մենից վատը այն էր, որ թագաւորական օրէնք-ների առաջ բոլորն էլ միահաւասար չէին։

### VI

Որչափ հարուստ դիրքով բարձր և ծագու-մով նշանաւոր էր մի մարդ, այնքան համարձակ ոտնատակ էր տալիս նա օրէնքները, առանց վա-խենալու որ և է պատասխանատուութիւնից։

Հարուստը խախտում է օրէնքը, որովհետև

digitised by A.R.A.R.@

հաւատացած էր որ կաշառակեր պաշտօնեային տուած իր կաշառքով նա կազատուի որ և է պատասխանատուութիւնից: Իսկ դա առաջանում էր նրանից, որ թագաւորական կառավարութիւնը այն սխալ համոզմունքն ունէր, որ իշխանութեան արժանիքի պահպանումը և ժողովրդի յարգանքը դէպի իշխանութիւնը պահելու համար անհրաժեշտ է պաշտօնեաների չարագործութիւնները ծածկել:

Եւ այս պետական ծառայութեան մէջ գըտնւած անձերի արարքների այս անպատիժ մընալը ունեցաւ այն հետևանքը, որ պաշտօնեաների և ոստիկանական ծառայողների մէջ զարգացաւ կամայականութիւնը: Իսկ այս կամայականութեան դէմ անհնար էր գտնել պատասխան և պատիժ, այն պարզ պատճառով, որ իրենք բարձր պաշտօնեաները միայն թղթի վրայ էր, որ պատասխանատու էին համարւում թագաւորի առաջ, իսկ իրօք չէ՞ որ նրանք նշանակւած էին իրեն թագաւորի կողմից:

Եթէ մի մինիստր վատ էր դուրս գալիս— դըրանում մեղաւոր էր, ի հարկէ, ինքը թագաւորը, որը ինքն էր նրան այդ պաշտօնը տուել:

VII

Ոստիկանական պետութեան մէջ թագաւորին շրջապատում էին միշտ հարուստ և ազնուական մարդիկ, որոնք հոգս էին տանում թէ ինչպէս անեն, որ լաւ տեղաւորւեն, հաստատւեն նրա շուրջը:

Հասարակ մահկանացուներ թոյլ չէին տըրւում թագաւորի մօտ, այնպէս որ թագաւորը լաւ ընտրութեան միջոցներից զուրկ էր:

Թագաւորի անձին մօտ գտնւող իւրաքանչիւր ոք աշխատում էր իր ձեռքը գցել որչափ կարելի է շատ իրաւունքներ, որով շուտով ողջ թագաւորութիւնը լցւեցաւ հարիւրաւոր և հազարաւոր զանազան մեծութեան միապետներով:

Սկսւում է խնամիական և ազգականական հոգացողութիւնը. պնակալէզները առաջ են քաշում իրենց բարեկամներին, լաւ ծանօթներին և պետական ողջ կառավարութիւնը անցնում է պալատական մարդկանց մի խմբակի ձեռք:

Արժանաւոր անձին գժւար էր ոստիկանական պետութեան մէջ իր խելքի և ընդունակութիւնների համապատասխանող տեղ, պարապմունք գտնել: Ամէն տեղ նստած են անընդունակ, բայց լաւ կապեր, հարստութիւն և ազգականութիւն ունեցող մեծ մասամբ հարուստ մարդիկ:

VIII

Ոստիկանական պետութեան մէջ թագաւորը իր իշխանութեան բարիքները բաժանում է ազնուականների և կալւածատէրերի մէջ՝ թագաւորը իրեն անւանում էր «առաջին ազնուական», որով պարզ ցոյց էր տալիս թէ ով է ինքը և ում շահերն են նրա սրտին աւելի մօտիկ:

Ոստիկանական պետութեան մէջ բոլոր պաշտօնեաները մեծ մասամբ ազնուականներից էին կամ թէ ազնուականութիւն էին ձեռք բերում՝ որոշ աստիճաններից յետոյ:

Նա հաստատում էր այն օրէնքները, որ խմբագրում էին աստիճանաւորները. իսկ սրանք շատ անգամ աչքով չէին տեսել այն ժողովրդին՝ որոնց համար սահմանւած էին այդ օրէնքները:

Հպատակների կողմից առաջացած ամեն մի անբաւականութիւն ոստիկանական պետութեան կողմից ճնշւում էր՝ ոստիկանական և զինուորական ուժով: Ինչ և անէր թագաւորը, բոլորը պէտք է գոհ լինեն, ժողովրդին հասած բոլոր թշւառութիւնների ժամանակ՝ օրինակ երաշտութեան, վարակիչ հիւանդութիւնների և այլն, ինքը թագաւորն էր կարգադրում թէ ինչ միջոցներ պէտք էր ձեռք առնել:

Ամէն բանում իշխանաւորը, պաշտօնեան, ոստիկանները. ամէն բանի դէմ ոստիկանական միջոցներ՝ որը ասում է. «այս թոյլ է տրւում, միւսը՝ արգելւում է»:

Ահա այն պետութեան առանձնայատկութիւնները, որին տրւած է ամենաճիշտ անուն՝ ոստիկանական պետութիւն:

IX

Քաղաքացիների իրաւունքից զրկւած լինելը, ժողովրդի տգիտութիւնը, պետութեան անվերջ հոգաբարձութիւնը սպանում էին մարդկանց մէջ ձեռներեցութեան ոգին, որի շնորհիւ փտում էր առևտուրը, արդիւնագործութիւնը և գիւղական տնտեսութիւնը:

Բացի դա ոստիկանական պետութեան մէջ հարկերը և տուրքերը այնպէս էին բաշխւած, որ որչափ աղքատ էր մարդ, այնքան համեմատաբար նա աւելի էր վճարում պետական զան-

digitised by A.R.A.R.@

ձարանին և ընդհակառակը՝ որչափ նա հարուստ էր, նոյնքան քիչ պէտք է նա վճարէր։

Եւ դա զարմանալի էլ չէ, եթէ յիշենք թէ ում հետ էր բաժանում թագաւորը իր իշխանութեան արտօնութիւնները և ում վրայ էր հենւում նա պետութիւնը կառավարելիս.

Մենք գիտենք, որ նրա անունով իշխում էին հարուստները, ազնուական կալուածատէրերը մասամբ նաև վաճառականները, իսկ ժողովուրդը ոստիկանական պետութեան սէջ հեծում էր տուրքերի և հարկերի ծանրութեան տակ, խարխափում էր տգիտութեան մէջ՝ զուրկ իրաւունքներից, ենթակայ բազմաթիւ իշխանաւորների կամայականութիւններին։

Այս բոլորի հետևանքը եղաւ այն, որ բոլոր երկիրներում ոստիկանական պետութիւնը մէկը միւսի յետևից տապալւեց։

X

Լուսաւորւած ժողովուրդների մէջ Եւրոպայում, ոստիկանական պետութիւնը գոյութիւն ունէր մի քանի դարեր։ Վերջին հարիւր տարում նա աստիճանաբար ընկաւ, շնորհիւ ժողովրդական խռովութիւնների և ապստամբութիւնների։ Ազգերը երկար կռւում էին թագաւորական իշխանութեան դէմ՝ քաղաքացիների իրաւունքների և արտօնութիւնների համար, բոլորի հաւասարութեան համար օրէնքների առաջ, մինչև որ նրանց աջողւեց կամ գլխովին վերջացնել թագաւորների իշխանութիւնը կամ սահմանափակել այդ։

Անցած ողջ դարը նշանաւոր է այդ կռւով, կռիւ արդար օրէնքների համար, կռիւ իրաւունքների համար։ Կարելի է ասել, որ լուսաւորւած ազգերը իրաւունքների տէր դարձան անդադար կռիւներ մղելով։ Նոքա այդ կռիւներով ոչնչացրին ոստիկանական պետութիւնը և նրա աւերակների վրայ դրեցին իրաւական պետութեան հիմքը, պետական այն կազմի, ուր տիրում է արդար օրէնքը և ճանաչւած է քաղաքացիների անձեռնամխելի, անխզելի, անխախտելի իրաւունքները, որոնց ոչ մի կառավարութիւն խլելու իրաւունք չունի։

Հոկտեմբերի 17-ի Բարձրագոյն Մանիֆէստը եկաւ և Գահի բարձրութիւնից յայտարարեց, որ ոստիկանական պետութեան կազմը ընդմիշտ վերացած է Ռուսաստանում։

Յետագայ գլուխներում մենք կխօսենք իրաւական պետութեան առանձնայատկութիւնների մասին։

(Կը շարունակւի)

---

## ԳԻՒՂԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Անցեալից եւ ներկայից)

Ինձ յաճախ պատահել է գիւղ գնալ, անցնել մի շարք գիւղերի միջից, ապրել մի քանի շաբաթ գիւղում, գիւղական համայնքի մէջ, քնել եմ բացօթեայ նրանց չարդախների վրայ, դուրս եմ եկել գիւղից, դիտելու նրանց առօրեայ աշխատանքը դաշտում, բոստաններում և այգիներում։ Այդ աշխատութիւնները օրւան տօթակէզ օրերում մանաւանդ՝ ծանր են եղել և անտանելի, բայց գիւղացին մի առանձին ջանասիրութեամբ և եռանդով աշխատել է իր չարչարանաց պտուղը տուն հասցնել, իւր բոկոտն և ցնցոտիների մէջ ապրող և անմեղութեամբ խաղացող երեխաների մերկութիւնը ձմրան տաժանակիր օրերում ծածկած լինել։

Դիտել եմ թէ՝ ինչպէս աշնան վերջերը, երբ գիւղացին սայլ բարձած, ջուխտակ եզները լծած գիւղից քաղաք է գնում իւր ցորենը, գարին, և կամ բոստանի (պախչէքի) եմիշն ու ձմերուկը վաճառ հանելու, արի տես, թէ այդ խեղճ մարդկանց եզներն ու գոմէշները ի՜նչ չարչարանքի են ենթարկւում ամբողջ ճանապարհի ընթացքում, մինչև որ սայլը քաղաք են հասցնում, որովհետև ճանապարհի ամբողջ տարածութիւնը այնպիսի խորթ ու փորթութիւններ, այնպիսի խրամատներ, այնքան հեղեղատներ ունի՝ այս ու այն բոստաններից և հէնց անձրևների հեղեղումներից առաջացած, որ ամէն անգամ, երբ սայլը մտնում է հեղեղատների մէջ, պէտք է տեսնել թէ՝ ի՜նչ տաժանակիր աշխատութեամբ և մեծ ճիգ թափելով դուրս գալիս և շատ անգամ հէնց սայլի առանցքը (Առնի) կոտրւում է և ահա գիւղացին նորից գիւղ է վերադառնում պատշաճին փայտ գտնում, գիւղական հիւս բերում և ահագին չարչարանքով նորոգում, և նորից ճանապարհ ընկնում, մի քանի քայլ տարածութեան մէջ նորից մի այդպիսի հեղեղատի հանդիպում և այսպէս անվերջ չարչարանքներ կրելով ու տանջւելով թէ ինքը և թէ իւր երիցս ողորմելի անասունները հազիւ հայ քաղաք են հասնում, մթերքը վաճառում և տուն դառնում։ Մտածում ես, իսկ ի՜նչ է շինում այդ գաւառի գաւառապետը իւր երկու օգնականներով, իւր դեղին ու՞ փայլուն կոճկաւոր պրիստաւներով, որոնք ահագին չաղ ռոճիկներ են ստանում։ Իսկ այս ճանապարհների, այս հեղեղատների վրայ Ո՞վ է հոգալու, գիւղի աղբակոյտերի մաքրութեան մասին Ո՞վ է մտածելու, քանի որ՝ գիւղացին այնքան տգէտ ու ողորմելի է, որ ինքնուրոյն բան մտածել, խորհել չը գիտէ. վերջապէս ռուսաց առածն ասում է. «մինչև որ

digitised by A.R.A.R.@

երկնքում ամպերը չը գոռան, գիւղացին երբեք չի խաչակնքիլ։ Այո, մինչև որ գիւղացուն չը սովորեն, նոյն իսկ մտրակի միջոցով չուզենան նրան մի օգտակար գործի գնել, նա այնքան տգէտ է և ողորմելի իւր նախապաշարումներով, իւր հասկացողութեամբ, որ հազիւ թէ ձեռնարկի մի օգտակար և շահեկան գործի։ Բայց ո՞վ է յանցաւորը, որ գիւղացին անասնական վիճակին է հասել. ծրխակեր տղրուկները (պարագլուխները), որոնք մի րոպէ չեն մտածել գիւղական ժողովրդի մտաւոր և հոգևոր վիճակի վրայ... Եւ իսկապէս, ինչպէս չը դատապարտել և խայտառակութեան սեան վրայ չ'կախել այդ բիւրօկրատների ներկայացուցիչներին, որոնք դըժբախտ ժողովրդի դառն քրտանց վաստակը կերել յղփացել են, սակայն նոյն այդ ժողովրդի մասին ոչ մի օգտակար գործ չեն կատարել։ Ի՞նչպէս չը զայրանալ գոլիցինեան ըէժիմի վրայ, երբ մթութեան մէջ խարխափող ժողովուրդը ինքը իւրովին քիչ թէ շատ սթափւում է և վարժարան բանալով իւր տնտեսական և մըտաւոր մխիթարութիւնն է ուզում ստանալ այդ վարժոցներից, ահա նոյն դեղին կօճկաւորների բուռն հրամանով ցպրոցը փակւում և հայ մանկիկը դուրս է շըպրտւում...

Ուրախ եմ որ «Աշխատանք»-ը ասպարէզ է եկել, հայ գիւղացուն ծառայելու, նրա խաւար մշուշը փարատելու, նրա տնտեսութեան և գործոցը առաջնորդ լինելու։ Այո, մեր բարօրութեան հիմնաքարը, գիւղացի ժողովուրդն է, այդ աշխատաւոր դասը որ՝ հաց և բազմատեսակ մթերքներ է մատակարարում թէ քաղաքացուն և թէ նրա մէջ ապրող ու գործող արհեստաւորին, վաճառականին ու ամէն դասակարգին։ Օրհնում և յաջողութիւն եմ ցանկանում «Աշխատանքին»։

ՆԱՀԱՊԵՏ

---

## ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

(Զրոյցներ գիւղացու համար)

Բ

Յիշում էք, ես անցեալ անգամ ասեցի, որ հողի պակասութիւնը, նրա ուժից ընկնելը և դրա պատճառով էլ ցորենի և հողից ստացած ուրիշ բաների գների բարձրանալը ստիպեց քաղաքացիներին, պետութեանը և գիտնականներին լուրջ մտածել հողի ուժից ընկնելու պատճառների մասին, հող մշակող գիւղացու, նրա աշխատանքի, իրաւունքների մասին։

Եւ որ ահա այդ մտածմունքն էր պատճառը, որ կամաց կամաց ստեղծուեց գիւղատնտեսական գիտութիւնը, մի գիտութիւն, որ այսօր մի մեծ, բազմակողմանի, հարուստ ուսում է, մի ուսում, որ մասին գրուել են հարիւրաւոր գրքեր, ուսումնասիրութիւններ, և այդ ուսումը հիմնուած է կեանքից վերցրած բազմաթիւ փորձերի վրայ։

Եւ ահա այդ գիտնականները, մօտենալով գիւղին, գիւղացուն, նրա աշխատանքին, նրա գործին, տեսան որ գիւղացու գործը և նրա վաստակը այնքան էլ պարզ ու հասարակ բան չի, ինչպէս այդ կարելի էր կարծել հեռուից։

Նրանք տեսան, որ եթէ հողը ուժից ընկել է, դրա համար կան շատ պատճառներ, եթէ ցորենը թանկ է նստում տիրոջ-նրան ցանողի վրայ—դա էլ դուրս է գալիս շատ պատճառներից, եթէ գիւղացին ցորենը էժան կամ թանկ է ծախում—դա էլ առանց պատճառի չէ։

Մի խօսքով, ինչ բանի որ կպան, ինչ բան որ տեսան—բոլորն էլ պատճառներ և պատճառներ։

Եւ ահա գիտնականները առաջ քան բուն գործը քննելու—սկսեցին քննել, ուսումնասիրել այդ պատճառները. և ահա այդ պատճառների քննութիւնը ուսումնասիրութիւնն էր որ ստեղծեց գիւղատնտեսական գիտութիւն և, դրանից յետոյ էր, որ նրանք հնար ունեցան քայլ առ քայլ, անցնել իրեն գործին այն գործին որի անունը գիւղատնտեսութիւն է. ոտի կանգնեցրին, կատարելագործեցին նրան այնպէս, որ այժմ դրանց շնորհիւ մի և նոյն հողը, որ առաջ տալիս էր 30 փութ ցորեն—այժմ տալիս է 100-120 փութ։ Եւ եթէ առաջ գիւղացին այդ հողից ստանում էր 20 րուբլի օգուտ, այժմ ստանում է 70—80 րուբլի։

Իսկ դա մեծ, շատ մեծ բան էր։

---

Ես եղել եմ Եւրոպայում—այսինքն այն երկրում, ուր ապրում և գործում էին այն գիտնականները, որոնք բարձրացրին գիւղացու հողի արդիւնքը. ես եղել եմ այդ գիւղերում, եւրոպացու գիւղերում և զարմացել եմ այդ գիւղերում ապրող գիւղացիների նիստ ու կացի վրայ, երբ համեմատել եմ մեր գիւղերի, մեր գիւղացիների հետ։

Ինչքան երկինքը հեռու է երկրից—այնքան էլ հեռու են համեմատութիւնից Եւրոպացու և մեր գիւղը։

Այնտեղ գիւղը—դրախտ է և ոչ թէ գիւղ։

Ա՛յ պատմեմ ձեզ։

Ամենից առաջ ճանապարհները.

digitised by A.R.A.R.@

Գիւղ տանող ճանապարհները 15 արշին լայնք ունին. բոլորն էլ լաւ, հրաշալի շաւղի ուղիղ ճանապարհներ, խճած, սալած—որի նման մեր ոչ մի քաղաքում չկայ։

Ճանապարհի աջ և ձախ կողմերում երկու-երկու արշին լայնութեամբ՝ ծառեր են տնկած, հաւասար, մի բոյի, մի հաստլի ծառեր, կարծես խուզած լինեն. այդ ծառերի միջով՝ ճանապարհի կողքերում՝ որը անց ու դարձ անողների համար է, ծառերը շւաք են անում, այնպէս որ ամառուայ ամենաշոգ ժամանակ դու գնում ես այդ շւաքի տակ և շոգ, համարեա թէ, չես զգում։

Ճանապարհի մէջ տեղը դա ֆուրգոնների, սայլերի համար է. ոչ ցեխ կայ, ոչ թոզ, ոչ խորթ ու բորթութիւն, զուգ, հաւասար, այնպէս որ երկու ձի լծած ֆուրգոնը բարձում են 100-120 փութ խոտ, ցորեն կամ թէ մի ուրիշ բան և ձիանները հանգիստ գնում են, կարծես 10-20 փութ ծանրութիւն են քաշում։ Տէրը գնում է կողքի ճանապարհով, հովի միջով—եթէ ամառ է՝ գլխարկը հանած, չիբուխը կամ սիգարը բերնին հանգիստ քաշում է, կամ թէ, մի փոքրիկ լրագիր ձեռքին, կարդում է։

Մօտենում ես գիւղին—առաջդ բացւում է լայն, մեծ, մաքուր, սիրուն փողոց։ Փողոցի աջ ու ձախ կողմերում՝ միջակ մի յարկանի տներ, մեծ լուսամուտներով, ինչպէս մեր լաւ քաղաքներումն են, տների կտուրները կղմինդրներով ծածկած (չերեպիցա). տների առաջ փոքրիկ ծաղկանոցներ, փողոցի աջ ու ձախ կողմերին ծառեր են տնկած։

Մեծ փողոցից աջ ու ձախ գնում են ուրիշ նոյնպէս մաքուր, լայն փողոցներ սիրուն տներով, ծաղկանոցներով։

Ամեն մի տաս տնից յետոյ, թէ աջ և թէ ձախ՝ փողոցի լապտերներն են, այնպէս որ գիշերը աւելի լոյս է գիւղի այս փողոցներում քան մեր Երևան, Ալէքսանդրապոլ քաղաքներում։

Մեծ փողոցի մէջ—գիւղի մէջ տեղում, ամենալաւ տեղում կտեսնէք մի սիրուն եկեղեցի, զանգակներով, մի քանի արձաններով—դրա դիմացը մի լաւ, մեծ, պայծառ տուն, որ աչքի է ընկնում—դա գիւղի ուսումնարանն է, ուր ուսում են ստանում գիւղի բոլոր տղայ թէ աղջիկ՝ 7 տարեկանից սկսած. ուսումը Եւրոպայում պարտադիր է. գիւղացու երեխան անպատճառ պէտք է ուսում առնի։

Եկեղեցու այս կողմը՝ հրապարակի վրայ գիւղի փոստատունն է, նրա մօտ գիւղական բանկը, գանձարանը։ Ամեն փողոցի վրայ. մի ճաշարան, կամ ռեստորան, որ «Բիր-Հալլէ»-է կոչւում—այսինքն գարեջուր-պիվօ խմելու տուն, մտնում էք մէջը դա մեծ սենեակ է, մի քանի սեղաններ, աթոռներ, ուր նստած են գիւղացիները և տղաները դրած մի-մի բաժակ գարեջուր կամ լրագիր են կարդում կամ իրար հետ խօսում, ճաշում, վիճում։

Իսկ իրանք գիւղացիք. դրանք մեր լաւ քաղաքացուց մաքուր են հագնւած։ Կօշիկները ոտներին, մաքուր շալվար, հագին մաքուր բաճկոն, տակին ժիլետ որից դուրս է ընկած անպատճառ ժամացոյց, հագին մաքուր շապիկ, գլխին շլեապա կամ կարտուզ. նոյնը և կանայք—մաքուր, պարզ դէյրաններով, կօշիկներով, տեսնում ես և աչքերիդ չես հաւատում. մի՞թէ սրանք գիւղացիներ են և ոչ թէ քաղաքացիներ։

Խօսում են կամաց, առանց գոռգոռալու, առանց հայհոյելու, առանց ձեռքով ոտքով անելու։

Դա գիւղի արտաքինն է։

Ես չեմ խօսում գիւղի ներքին կեանքի մասին, գիւղացիների նիստ ու կացի, նրա վարի, ցանքի, արտերի, հնձի կալի, ժողովների, դատարանի, սանուռէքի, գանձարանի, ընկերութիւնների մասին։

Յետոյ, երբ տեղը կը գայ, կը խօսենք և դրանց մասին։

Դէհ համեմատեցէք եւրոպացու այս գիւղը մեր գիւղերի հետ։

Ճիշտ չե՞մ ասում որ տարբերութիւնը մեծ, շատ մեծ է։

Բայց առաջ, սրանից մի հարիւր տարի առաջ՝ դրանք եւրոպացի այդ գիւղերն էլ համարեա թէ մերի նման էին։

Ու եթէ այժմ տարբերութիւնը այդքան մեծ է, դա նրա համար, որ մի կողմից կառավարութիւնը միւս կողմից քաղաքացիք և գիտնականները, երրորդ կողմից իրանք գիւղացիները քննեցին իրանց աղքատութեան պատճառները, քննեցին, ուսումնասիրեցին և կամաց կամաց ուղղեցին պակաս կողմերը։

Հունձը մեծացաւ, օգուտը շատացաւ, գիւղը

digitised by A.R.A.R.@

հարստացաւ, բացւեցին ուսումնարաններ, ժողովուրդը լուսաւորւեց և նրա հետ նրա ամբողջ կեանքը փոխւեց։

Ահա ինչ կը նշանակի պատճառի ուսումնասիրութիւն

ԱԳՐՈՆՈՄ

---

## ՈՒՐ ԵՆՔ ՄԵՆՔ ԳՆՈՒՄ

Եղել է ստրկութեան ժամանակ, եղել է և ճորտութեան ժամանակ։ Մարդիկ բաժանւում էին ազատ—ազնիւների կամ տէրերի և ոչ ազատ ստրուկների, ճորտերի։ Ազնիւները կամ տէրերը իշխում էին ստրուկների ու ճորտերի վրայ և նրանց հետ՝ ինչ որ ուզում, այն էին անում։ Թէ ինչ էին անում, թողնենք, որովհետև շատ անմխիթար պատմութիւն է և մէկ էլ, խօսել շատ կը հարկաւորւի։ Այն ժամանակներն անցան, գընացին անդարձ և մարդիկ «ազատւեցին»։

Այդպէս է, ճիշտ է արդեօք.

Բոլորովին. և այդ բանը ինքներդ հէնց ձեզ վրայ փորձել էք ու գիտէք։

Մի ձեր չորս կողմը նայեցէք. ինչ էք տեսնում.

Տեսնում էք ճորտութիւն չը կայ. այո, ճորտութիւն չը կայ, բայց նրանից դեռ շատ բան է մնացել, ուստի համարձակ կարող ենք ասել, որ մեր ունեցած «ազատութիւնը» ազատութիւն չէ…

Եթէ ուզում էք հաստատ իմանալ, ամեն մի իշխանութիւն, ինչպէս այնպիսի իրաւունք պիտի ունենայ, որ կարողանայ կատարել այն պարտականութիւնները, որ նրա վրայ դրել է օրէնքը։

Իրաւ է, այս էլ մեծ նշանակութիւն չունի, այն դէպքում, երբ իրենք օրէնքները վատ են ու ճնշող։ Պէտք է որ օրէնքները ազատամիտ լինեն։ Բայցի սրանից, հարկաւոր է, որ այդ օրէնքները ճշտութեամբ կատարւեն։ Ժողովուրդը պէտք է հնարաւորութիւն ունենայ հսկելու, որպէսզի օրէնքները չը խախտւեն։ Ժողովուրդը իրաւունք պիտի ունենայ կռւել օրէնքների խանգարողների գործած անկարգութիւնների դէմ։ Այն ժամանակ զանազան իշխանաւորներ ոչ կարող են օգտւել, և ոչ էլ ի չարն գործ դնել իրանց իրաւունքները։ Բոլորս էլ կը հասկանանք, որ ոչ թէ ժողովուրդն է նրանց համար, այլ իրանք են ժողովրդի համար։

Այսպիսի են ազատ կարգերը։ Այսպիսի կարգեր կարելի է հաստատել, երբ օրէնքներ հրատարակողը ժողովրդի ընտրած ներկայացուցիչներն են և երբ ժողովուրդը իրեն և իր շահերը պաշտպանելու և ապահովելու եղանակ ու միջոցներ ունի։

Իսկ գլխաւոր եղանակն ու միջոցները—ազատ խօսքն ու ազատ միութիւններն են։ Թող ամեն մէկը հնարաւորութիւն ունենայ ամեն տեսակ անիրաւութիւն ու անօրէնութիւն հրապարակ հանելու, ազատ արտայայտելու, գրելու ու տպելու այն բոլորը, ինչ որ գիտէ ու մտածում է։

Թող ոչ ոք չը խանգարէ քաղաքացիներին, երբ նրանք հաւաքւեն իրանց վիճակի մասին մտածելու։

Թող ոչ ոք չարգելի բանւորներին, երբ նրանք կռիւ են մղում իրանց շահերի համար, նոյնը թող անեն գիւղացիները կալւածատէրերի վերաբերմամբ։

Ինչպէս առաջ Եւրոպայում, այնպէս էլ հիմա, մեզ մօտ, Ռուսաստանում, ազատութեան համար կռիւ է մղւում. այս բանի մասին ի հարկէ գիտէք ու լսել էք։ Եւ հեռու չէ այն ժամանակը՝ երբ բոլորը, թէ ազատ կը լինեն և թէ իրենց աւելի թեթև կը զգան։

Բայց, ազատութիւն ստանալու և նրանով օգտւելու համար, հարկաւոր է հեռու նայել. մի թէ ամեն բան ազատութեան մէջ է, մի թէ նրանով ամեն ինչ վերջանում է։ Մարդկութիւնը հեռու ճանապարհ է գընում, և որպէսզի չը շեղւի բռնած ընթացքից, աւելորդ պայտներ չանի և ոյժը զուր չը ծախսի, պիտի լաւ ու պարզ իմանայ նա, թէ ուր է գնում և այս ինչ կայարանից որ կայարանն է հասնում

Ահա, եւրոպական ժողովուրդները ազատ օրէնքներ են ձեռք բերել, և ինչ մի՞թէ մտածում են նրանք, որ պիտի կանգ առնել։ Ո՛չ, նրանք նոր և նոր կռիւներ են մղում, և այս կռիւը առաջւանից լուրջ են համարում։ Բայց ինչ են ուզում—ի հարկէ այն, ինչ որ պակասում է նրանց։ Մի թէ ազատ օրէնքները լիակատար ազատութիւն չեն տալիս։ Տեսնենք։

Անգլիան, կարելի է ասել, աշխարհիս երեսին գըտնւած երկիրներից ամենաազատն է։ Այնտեղ օրէնքները ժողովրդի ներկայացուցիչներն են հրատարակում, չինովնիկները բարեխիղճ, դատարանները—անաչառ, բանւորական օրը—ամեն տեղ իննժամեայ, աշխատավարձը մեր աշխատավարձից երեքչորս անգամ աւելի, ժողովուրդը այնքան լրագիր ու գիր է կարդում, որ մենք հազիւ կարող ենք երևակայել. խօսքը ու մամուլը բացարձակ ազատութիւն են վայելում, ժողովրդական հաւաքումները և զանազան գործերի մասին խորհրդակցելը ոչ մի ճնշման չի ենթարկւած։ Բայց և այնպէս, այնտեղ էլ դրախտ չէ. եթէ քննենք, կը տեսնենք, որ շատ հեռու է լիակատար, իսկական ազատութիւնից։

Ահա ձեզ—անգլիական բանւորը։ Նա աւելի լաւ է ապրում, քան մեզ մօտ հասարակ չինովնիկը, նա աշխատում է գործարանում կամ գիւղում օրական 9 ժամ։ Բայց մի՞թէ նա ազատ է այն 9-ը ժամւայ ընթացքում։ Ո՛չ, նա կապիտալիստի տրամադրութեան տակ է գտնւում, այն կապիտալիստի, որին ծախեց նա իր բանւորական ոյժը և զրկւեց իր ազատութիւնից։ Իսկ եթէ նա ուզէր աւելի ունենալ այդ ազատութիւնից։ Օրինակ միայն 8 ժամ աշխատէր, որին և ձգտում են առաջնակարգ բանւորները։ Նրան չեն տալիս։ Ո՞վ է չը տուողը։ Նոյն կապիտալիստը։ Իսկ ինչու չէ տալիս. որովհետև նրան շահ, որքան կարելի է շատ շահ է հար-

digitised by A.R.A.R.@

կեանք, ճիշտ այնպէս ինչպէս և մեր կապիտալիստինը։

Կապիտալիստները բանւորների աշխատանքից շահ են ստանում։ Ինչպէս և մեր կապիտալիստները, նրանք էլ են կերակրում՝ բանւորներին, թէև պակաս չափով, որովհետև իրանք, բանւորները կարողանում են միջանից լաւ՝ իրանց ուզածը կատարել։

Քանի որ գոյութիւն ունի կերակրումը, թէկուզ օրէնքները շատ ազատ լինեն, չը կայ իսկական ազատութիւն։ Բայց այս դեռ քիչ է։ Եթէ երբեմն աջողւում է բանւորին ազատել կերակրումից. այդ միայն նրա համար, որպէսզի ընկնի անգործութեան ճանկը։ Եթէ բանւորը չի համաձայնւում կապիտալիստի հետ, սա նրան հեռացնում է, ասելով «դուրս, գնա փողոց»։ Ասենք թէ, ծանր է աշխատանքը այս ինչ կապիտալիստի մօտ, քիչ է աշխատավարձը և բանւորը լաւ պայմաններ է պահանջում. կապիտալիստը չի տալիս. բանւորները ստիպւած գործադուլ են առաջացնում։ Հազարաւոր բանւորներ վերջացնում են խնայած վերջին կոպէկները, տանջւում են քաղցը, ծեծւում են ցրտից, միթէ այս ազատութիւն է։

Լաւ է եթէ կապիտալիստը զիջեց, բայց չէ որ նրա ոյժը մեծ է և նա երկար կարող է դիմանալ։

Մօտերս մի դէպք պատահեց. գործադուլ արին անգլիացի միլիոնատէր լորդներից մէկի քարահանքի բանւորները, գործադուլ արին, որովհետև լորդը նրանց թոյլ չէր տալիս միութիւններ կազմելու և հեռացնում էր նրանց, ով իրեն չէր հնազանդւում։

Գործադուլ անողները երկուսուկէս տարի դիմացան, շնորհիւ համարեա ամբողջ Անգլիայի իրենց ընկեր բանւորների և ուրիշ բարի մարդկանց օգնութեան, բայց լորդը չէր զիջում։ Այնքան էր մեծ նրա կարողութիւնը, որ ոչինչ էր նրան՝ տարին մի քանի տասնեակ և հարիւր հազար րուբլու վնաս կրելը։

Լինում է, որ կապիտալիստի գործերը «ձախ» են գնում. նա, ստիպւած, կրճատում է իր ձեռնարկութիւնը և ակամայ փողոց է շպրտում հարիւրաւոր և հազարաւոր բանւորների։ Իսկ ճգնաժամերի, կրիզիսների ժամանակ, երբ արդիւնաբերութեան գործերը սարսափելի վատթարում են, միևնոյն միջոցին՝ ստիպւած դիմում են հարիւրաւոր կապիտալիստներ և շատ ձեռնարկութիւններ փակւում են. սկսւում է ընդհանուր պարապութիւն, իսկ նա, ով դեռ աշխատում է, համաձայնում է կապիտալիստի նշանակած պակասացրած գնի հետ և շարունակում է աշխատել, և այստեղ գործին, արդէն ոչ մի գործադուլ չի օգնի։ Ճիշտ այսպիսի ճգնաժամի մէջ ընկաւ Ռուսաստանը 1899 թւին և անցեալ տարի, մանաւանդ հոկտեմբերին որ մինչև հիմա էլ դեռ չի դուրս եկել նրա միջից։ Վերջապէս առանց ճգնաժամի էլ, ամեն մի արհեստի բանւորներ կարող են պարապ, անգործ մնալ միայն այն պատճառով, որ հնարւում է մի այնպիսի մեքենայ, որ կարողանում է փոխարինել բանւորներին։ Մեքենան պիտի բանւորների օգնական լինի, պիտի թեթևացնի նրանց աշխատանքը՝ բայց ինչ ենք տեսնում, նա բանւորների համար դառնում է նզովք, անէծք։ Նրանց սովի ու զրկանքի է մատնում և օգնում կապիտալիստին, որ իր պահանջների հպատակ է դարձնում ճորտահատեալ բանւորներին։

Առհասարակ, որ կողմից ուզում ես նայիր, բանւորին միշտ և շարունակ մի բան է սպառնում անապահովութիւնը։

Բանւորի կեանքում չը կայ մի օր, երբ նա կարողանար իր դրութիւնը հաստատ ու յուսալի համարել։ Իսկ երբ գոյութիւն ունի անապահովութիւնը, էլ ինչ ազատութիւն է։ Մի՞թէ բանւորը կարող է անել իր ուզածը հանգիստ սրտով, երբ գիտէ, որ նրա բաղդը կախւած է թէ կապիտալիստից, թէ իր աշխատանքի պահանջից՝ շուկայում, թէ ճգնաժամից, թէ մեքենայից և թէ ինչից որ միայն կարելի է։ Այս ոչ թէ ազատութիւն է, այլ ծանր կախումն։ Զո՞ւր չէ մի քանի գիտնականների ասածը, թէ՝ ժամանակակից վարձու աշխատանքը թեթևացած ստրկութիւն է։

ԽԱՆ.

---

## ՓԻՂՆ ՈՒ ՃԸՍՏԻԿԸ

Փիղն է հսկայ մի կենդանի,
Չորս ուղտի չափ հեշտ կը լինի.
Ինքն ըզգայուն,
Եւ իմաստուն,
Վրան կառնէ մի ամբողջ տուն։
Թէ ինչպէս է տեսքովն էլ նա,
Պատկերի մէջ լաւ կերևայ.
Գլուխը հաստ՝ մի ծառաբուն,
Քիթը երկայն՝ եօթը կանգուն,
Միւս կողմերն էլ սրանց նման
Կոշտ ու կոպիտ, հըսկայական։

***

Այսպէս մի փիղ ժամանակով
Անց էր կենում մեծ քաղաքով.
Հէնց որ տեսան այդ կենդանին,
Եզն ու գոմէշ, ձին ու ջորին,
Ուղտն ու էշը, շունն ու կատուն,
Սարսափելով՝ փախան իսկոյն.
Չը վախեցաւ միայն մի շուն,
Կամ ճիշտն ասած՝ փոքրիկ շընիկ.
Փոքրիկ շընիկ,
Բայց շատ ճարպիկ
Պըստիկ,
Ճըստիկ...
Ճըստիկն աղմուկ բարձրացրեց,

digitised by A.R.A.R.@

Ու հաչելով հասկացրեց
Մեծ շներին,
Բոզարներին,
Թէ՝ «փախչիլը ամօթ բան է,
«Փիղն ինչ է որ՝ մեզ բռնէ»։
Այս ասելով վրայ վազեց,
Փղի ոտքից մի պինդ կծեց.
Փիղն այդ զգաց,
Բայց լուռ մնաց։
Երբ Զըռտիկը մէկ էլ խածեց,
Փիղը արագ պտոյտ գործեց.
Որ շընիկին բռնէ շուտով,
Կամ մի զարկ տայ երկայն քթով.
Զըռտիկ շնիկն այդ հասկացաւ,
Ճարպկութեամբ մի կողմ անցաւ,
Կրկին աղմուկ բարձրացրեց.
Մեծ շներին խրախուսեց։
Հաւաքւեցին մեծ շըները,
Զանգին, Զրանգին և միւսները,
Հարայ-հրոց բարձրացրին
Ու բըրաչափ ղըւփի Փղին
Վախեցրին
Ու փախցրին...

⁂

Ճշմարիտ է, մեր Զըռտիկին
Հին ժամանակ տընազ արին,
Մեղադրեցին
Ու ասացին
Թէ ինչպէս է յանդըգնացել
Եւ մեծ փղի վրայ հաչել,
Բայց երբ խելքով հասունացան,
Գիրքի ընկան
Եւ իմացան,
Որ մեծերն են լինում վախկոտ,
Իսկ փոքրերը՝ քաջ ու սրտոտ
Թէ՝ այս բանը բնական է,
Իսկ պատճառը պատմական է...

⁂

Բայց դուք, փոքրե՛ր, երբ մեծանաք,
Ո՛չ մի բանից չըվախենաք.
Թող լինի փիղ, արջ ու մարազ,
Գայլ ու առիւծ, վագր ու յովազ,
Ցարձակւեցէք անահ սրտով,
Եւ անխռով,
Թէ միայնակ,
Եւ թէ խմբով...

ՂԱԶ. ԱՂԱՅԱՆ

## ԳԱՒԱՌ

Ախալքալաքի գաւառից, Օրոճալար գիւղ.

Գիւղացի ժողովուրդը մեզանում հիմա շատ ծանր վիճակի մէջ է գտնւում։

Երկրագործութիւնը կատարւում է հին, նահապետական եղանակով և շատ անգամ մեր գիւղացուն այնքան օգուտ չի տալիս, որ նա կարողանայ անկարօտ ապրել։ Նախ այն պատճառով, որ հողը շատ քիչ է։ Հողի այն քանակը, որ սրանից 50—60 տարի առաջ բաւականութիւն էր տալիս գիւղացուն, այժմ, երբ նրանք շատացել, 150 տուն են դարձել, այլ ևս շատ քչութիւն է անում։

Աւելացրէք դրա վրայ և զանազան պատուհասներ, օրինակ կարկուտից, չորութիւնից, դաշտային մկներից և այլն նրան հասած վնասները և պարզ կըլինի գիւղացու դրութեան ծանրութիւնը։

Բայց դա բոլորը չի։

Կան և ուրիշ պատուհասներ, որ առաջ են գալիս մեր գիւղացու տգիտութիւնից, նրա սնոտիապաշտութիւններից։

Օրինակ չբերութիւնը։ Չբեր կանայք գիւղերում շատ կան. բայց ինչ են անում նրանք. փոխանակ բժշկի խորհուրդի դիմելու, նրանից հարցնելու—դիմում են զանազան գըրբացների, մոլլաների, փալչիների և ի հարկէ վնասից բացի՝ ոչ մի օգուտ չեն ստանում և այդ վնասի վրայ էլ դեռ իրանց աշխատած կոպէկներն են գնում վարձատրում, այդ խաբեբաներին։

Մեր գիւղերում, դժբաղդաբար, շատ է տարածւած մի ուրիշ մոլութիւն դա արբեցութիւնն է, որին դիմում են ամեն դէպքերում թէ հարսանիքների ժամանակ՝ թէ մկրտութիւնների և թէ, մեռելների քելեխների հոգեհացի ժամանակ։

Այդ վերջին դէպքում կայ և մի ուրիշ աւելի մեծ վնաս. Պատմեմ.

Ինչպէս յայտնի է մեր գիւղերում շատ տարածւած են տարափոխիկ հիւանդութիւնները, որոնք ահագին զոհեր են տանում գիւղացիներից. քիչ չեն և վեներական հիւանդութիւններ ունեցողներ մանաւանդ սիֆիլիս. և ահա այս կամ այն տարափոխիկ հիւանդութիւնից մեռնում է մէկը. տանում թաղում են նրան և գերեզմանատնից տուն են գալիս նրա հոգեհաց քելեխն ուտելու։ Եկողների առաջ դնում են հիւանդի գդալները, ամանները, նստում են այն շորերի վրայ, ուր նա պառկած էր. և որովհետև դրանցից ոչ մէկը ախտահանւած չէր, ուստի այդպիսի քելեխներից յետոյ գիւղում բռնկւում է տարածւել մերթ այս մերթ այն տան մէջ նոյն հիւանդութիւնը, որից մեռել էր առաջին հիւանդը։

Գիւղացիների աղքատութիւնը բացում է նրա համար և մի ուրիշ չարիք, դա պարտքն է։ Պարտք հարկի համար, պարտք հիւանդի, պարտք քելեխի, պսակի,

digitised by A.R.A.R.@

հարստնիքի. միշտ և միշտ պարտք և ի հարկէ մեծ, սարսափելի տոկոսներով:

Իսկ գիւղացուն պարտք տուող բարեհոգիներ շատ կան, որովհետև նրանք վերցնում են ահագին շահ՝ նրանից:

Բայց մի բան պէտք է խոստովանել, որ վերջին ժամանակներս վաշխառուների թիւը քչացել է, շնորհիւ ինտելիգէնտ մարդկանց, որոնք կռւեցին դրանց դէմ, նոյն իսկ լրագրի նիւթ շինեցին, վաշխառուների անունները տւեցին։ Սակայն եթէ վաշխառուների թիւը պակասեց—դրանց տեղը բռնեցին լաւոչնիկները խանութպանները, որոնք ծծում են գիւղացու ողջ արիւնը։

Լաւոչնիկն մենակ չի, նա միշտ ունի իր կողմը գիւղի ջահելներին, որոնք գիշերները շատ անգամ ցորենի թէղերից գողանում ենւն բերում լաւոչնուն տալիս, խմում, թղթախաղով պարապում՝ երբեմն մինչև առաւօտ:

Դժւար, շատ դժւար է այժմ գիւղացուն պաշտպանել իր ամբարը, ունեցածը այդպիսիներից, իսկ գանգատւել դրանցից, օրէնքի դիմել—դա կը նշանակի բաց դէմ ունենալ և լաւոչնուն և գիւղի ջահելներին։

Այս համառօտ նկարագիրը կը պարզի ձեր առաջ մեր գիւղական թէ տնտեսական և թէ բարոյական կեանքի բոլոր սոսկալի կողմերը։

Գիւղը քայքայւում է, քայքայւում է և ինքը գիւղացին, իսկ փրկութեան ձեռք, մի լոյս—ոչ մի կողմից. պէտք է օգնել նրան, բացել նրա ցաւերը, մտրակել, հալածել նրա մէջ բուն դրած տզրուկներին։

Ահա «Աշխատանքի» գործը, մի սուրբ գործ։ Օգնենք ուրեմն ձեզ դա միակ ելքն է այժմ, երբ ոչ մի տեղից յոյս չկայ։

ՄՐՄՈՒՆՋ

---

Կաղզւան փետրւարի 2-ին

Մեր գիւղական ժողովուրդը դեռ խորին խաւարի մէջ է... և այնքան միակողմանի ու սահմանափակ է նրա հայեացքները կեանքի վրա, որ ինչպէս հին դարերում—երբ փող չկար և մարդիկ արդիւնաբերութեան փոխանակութեամբ էին ապրում—փողի գործածութիւնը խորթ էր թւում, նոյնքան այժմ մեզանում լրագիրն է խորթ թւում, որովհետև մեր գիւղական ժողովուրդը սովոր չէ, նա դեռ պատրաստւած չէ ըմբռնելու՝ իրեն առաջարկւած նոր—օգտաւէտ միջոցներով առաջնորդւելու համար.

Ուրեմն «Աշխատանքը» կոչւած է այդ նոր—հոգի կենսական գաղափարը տարածելու գիւղական ժողովրդի մէջ, ինարկէ մեծ դրկանքներ աչքի առաջ ունենալով հանդերձ։ Բայց չէ որ «բժիշկը հիւանդներին է պէտք»։

Նա, ով որ գիտակցօրէն հետաքրքրւել է մեր գիւղական կեանքով՝ անշուշտ նկատած կլինի, որ մեր գիւղական ժողովուրդը իր կենցաղավարութեան դասը իւրացրել է չափազանց միակողմանի՝ այն էլ խեղաթիւրւած կերպով. և այդ ոչ նպաստաւոր դասում ոչ մի նոյնիսկ զարգացած՝ մարդ չի կարող մրցել նրա հետ. բայց կեանքի այդ ընթացքը նրան մինչև օրս մի բարօր վիճակի չհասցնելով հանդերձ՝ այսուհետև էլ—երբ գնալով կեանքի պայմանները և՛ փոխւում են և՛ բարդւում է՝ կորուստ է տանում.... Երբ այդ կեանքի հետ մի քիչ ծանօթանում ես, խոցւած սրտով պէտք է բացականչես—խաւարն է, խաւարն է թագաւորում այնտեղ... և ոչ մի բարի գործի հիմք դնելու հող չկայ. ինչ գործ էլ որ սկսում են այնտեղ—կեղծ են և խաբուսիկ, մինչև անգամ՝ վստահանում եմ ասել՝ վտանգաւոր.... Եւ դուք հէնց այդ հողից էք սկսել, որ բոլոր բարի գործերի ծնողն է։

Մ- Ղ.

---

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մ ո զ դ ո կ.

Գիւղը մի մեծ ախոռ է, ուր շար ի շար կապած են տեսակ-տեսակ կթի կովեր՝ գիւղացիները։ Օգտւում են այդ կովերով ով ինչ տեսակ և ինչ չափով կարողանում է։ Կթում է գիւղացուն աղան, վաշխառուն խանութւորը, տէրտէրը, տիրացուն, վարդապետը, կթում է գիւղացուն «բարեխնամ» կառավարութիւնը՝ բեղբաշի, գլաւա, գրագիր, հարկահան, դատաւոր, պրիստաւ... Կթում են անխնայ և գոնէ մի բուռ կեր՝ դարման էլ չեն տալիս, որ խեղճի չորացած ուրը մի պուտ կաթ գայ... Ահա այդ կթւող կովերի օրհասական բառաչն էր, որ վերջին ժամանակներս մերթ ընդ մերթ սկսել էր լսել մեր «ազգային», բիւրոկրատ» մամուլի էջերից։

Բուն ժողովուրդը՝ գիւղացին իր գիւղական ուսուցչի, ինտելիգենցիայի, քահանայի բերանով իր արժանաւոր տեղն էր պահանջում հայ մամուլի էջերում։ Եւ իր աշխատող տարրերի, գիւղական մշակների շնորհիւ որոշ չափով այստեղ դասակարգերի ուշադրութիւնը դրաւեց նա։ Սակայն գիւղում ով էլ լինի կթի կով է, լինի դա կարդացող, վարժապետ, տէրտէր...

Կթի կովեր դարձան և գիւղական այդ ցաւերը լացող գիւղի կեանքից գրողները, թղթակիցները մեր քուրմ խմբագրութիւնների համար, որոնք օգտւելով հանդերձ նրանց աշխատութիւններից, մինչ ցարդ նայել են նրանց վրայ, ինչպէս արծիւը ճիճուին։

Երանի, հազար երանի, թէ ես էլ մեր խեղճ գիւղացու պէս տեսած—ճանաչած չը լինէի այդ լուսաւոր փառաց համբուող քրմա—խմբագրատները։

Ես տեսել էի մեր գիւղերում ամեն տեսակի ու որակի վաշխառուներ, սակայն այդ տեսակը նոր, միանգամայն նոր էր ինձ համար։ Դորա գրական վաշխառուներն են, գաւառական, գիւղական թղթակիցներին կեղեքող խմբագրութիւնները, որ իրանց անխիղ-

digitised by A.R.A.R.@

ճութեամբ եթէ չեն գերազանցում գիւղական վաշխառուին, նրանից յետ էլ չեն մնում...

Ի սրտէ ուրախ ենք, որ վերջապէս մենք՝ գիւղական «աճիճուներս»՝ գիւղական գրողներս էլ ունեցանք մի թերթ, որի շուրջը պիտի պտտենք մեզ պէս ու անդուլ աշխատանքով լսելի դարձնենք մեր «տզզոցը»։ Ուրախալի է մանաւանդ, որ վերջապէս մի թերթ ծնուեց, որ գիւղական ուսուցիչներին, քահանաներին, ինտելլիգենցիային՝ այդ անմռունչ «կթի կովերին» ընդունում է իբրև «կենդանի ոյժ»...

ՋԱՒԱԽԵՑԻ

---

## ՀՈՂԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ

*(Պատկերներ գիւղից)*

IV

...Երբ լսեցի թէ Ուզուն Ախմախը, յիրաւի ձեռնարկել է այդ անսովոր աշխատութեան, պատիկ հետաքրքրուեցի տեսնել հողը, տեսնել հողի աշխատաւորին – և պիտի ասել՝ հսկայ աշխատաւորին, որովհետև գիտէի թէ որքան տաժանելի, տոկուն և մեծ աշխատանք էր հարկաւոր՝ ցորեն ունենալու համար մի այդպիսի խոպան տարածութիւնից։

Աշունը դրէթէ սկսել էր Դուզանում.—ամպամած օրեր, անձրև մաղող շաբաթներ, խոնաւ, մշուշոտ, ցեխ և ճնշող եղանակներ։

Այնուամենայնիւ յաջողուեց ինձ հասնել Թէոսի հողին։

Ուզուն-ախմախն արդէն կէսից աւելին մաքրել էր քարերից ու տատասկներից և ձեռնարկել՝ այժմ այդ կէսի հողը շուռ տալ գութանով։

—Բարև, Թէոս։

—Ա՛յ Աստծու բարին, պ. Երուանդ։

—Ա՛յ տղայ, կանչեցի նրան—ինչու չը թողիր գարնան հերկելու. հողը գոնէ քիչ կը կակղէր։

—Վնաս չունի, պ. Երուանդ, գոչեց Թէոսը՝ առանց մաճը ձեռքից թողնելու—անձրևները կակղացրել են. գարնանն էլ կը հերկեմ, կը թամզեմ, հետ կը փոցխեմ էլ ու կարտոֆիլ կը ցանեմ... Աստծով լաւ կըլի. փխս հող չի. կասես մէջի հող ըլի...

Ու շարունակեց հերկել։ Որդուն նստեցրել էր մի լծի վրայ. վարձել էր չորս զոյգ գոմէշներ և գութանի տակ հողը արագութեամբ շուռ գալով խոր ակոսներ էր կազմում։

Յիրաւի, անտառային հող էր երևում տակի շերտերում։ Ըստ երևոյթին շատ առաջ այստեղ անտառ եղած պիտի լինէր։ Թէոսը չէր սխալուել, և եթէ շարունակէր այդպիսի անդուլ գործունէութիւնը, մինչև տարուայ վերջերին իսկ կարող էր մի աշնանացան փորձել նրա վրայ։

Մնում էր տեսնել այժմ թէ տէրութիւնը—անտառապահն ու պահապանը ինչպէս կը վերաբերուէին Թէոսի «յափշտակութեանը»։

—Թէոս, ասացի ես.—բաս ինչ կանես, եթէ գան ու հողը ձեռքիցդ խլեն։

Ո՞նց. ասաց նա և մաճը ձեռքիցը բաց թողեց—եանի ընչի՞ պիտի խլեն. պակա՞ս աշխատանք եմ դնում վրէ՞ն... չեօլ էր, քարո՛տ, փշո՛տ, դէ՛ն քցած հող... բռինքո՛վ կակղացրել եմ, էս ձեռներո՛վ քարերը մէկ-մէկ հաւաքել, փուշերը դուրս տւել... բա ընչի՞, մաղամ թալա՞ն ա էս աշխարհը, որ գան ու աշխատանքս խլեն ձեռքիցս...

—Տէրութեան հող է, քեզ խօ իրաւունք չե՞ն տւել մշակելու. մէկ էլ տեսար եկան, վզակոթիդ խփեցին ու...

—Ո՞վ, արէշչի՞կը... կանչեց Թէոսը—չի՛ կարալ... էդքան զակօնը գիտենք...

Ասլա ժպտեց սրբեց բռինքն ու եկաւ մօտս։ Նստել էր քարակոյտերից մէկի վրայ։

—Չի կարալ. աւելացրեց նա անվստահօրէն—շատ-շա՛տ՝ գանգատ կը տայ, պրատակոլ կը շինի, կը կանչեն՝ հրէն ա, էն կէսը ցոյց կը տամ... իրանք էլ կը տեսնան որ անպէտք, դէ՛ն քցած հող էր, կը ծիծաղէն արէշչիկի վրայ ու... բան չեն ասի։

Գլուխս երերցրի։ Միամիտ Թէոս։ Ըստ երևոյթին երբէք գործ չէր ունեցել այն անհամար չինովնիկների հետ, որոնք ծիծաղել գիտեն միմիայն իրենց զոհերի ճիչերի վրայ, որոնք ոչ մի առիթ չեն փախցնում Թէոսներին անգամ տանջելու, ճզմելու...

---

Ապահով էի, որ Թէոսի արածը գաղտնիք մնալ չէր կարող։ Անշուշտ անտառի թէ պահապանը և թէ օգնական հսկողները լսած պիտի լինէին։ Մի օր գիւղում, իմ ներկայութեամբ իսկ, երբ Նիկօլը հարցրեց արէշչիկին, թէ գիտէ՞ր նա արդեօք «ուզուն-ախմախի» արածը—պահակը ժպտաց ու ասաց.—գիտեմ։ Թող անի,

digitised by A.R.A.R.@

ինչ կայ։ Տէրութիւնը ուրախ կը լի, որ իրա հողերը քարոնց մաքրեն ու պէտքական դարձնեն։

Գիւղացիք միմեանց նայեցին, հասկացան ու քրքջացին։

Բայց, երեւի, այդքան էլ անխիղճ չէր աբէշչիկի օգնական Աւագը, որ մի օր հրացանն ուսին՝ տնկւեց յանկարծ Թէոսի առաջ ու գոչեց.

—Աղա, էն ինչ բանի ես, այ ուզուն-ախմախ։

Թէոսը մաճի վրայ ընկած, գոմէշները քշողների «հօռովէլին» էր ձայնակցում։ Թէեւ տեսաւ Աւագին, բայց չը լսեց ասածը։

Աղա, էդ ինչ բանի ես այ Ուզուն-ախմախ։

—Հօ, հօ... կանգնեցրեց գութանը՝ Թէոսը եւ դարձաւ դէպի նա—ինչ կայ, Աւա՛գ, խէր ըլի։

—Աղա՛, ձայնեց օգնականը—բա դու խօ չես դժւել։ Էս ո՞ւր ես կազեօնի հողը վարում, կասես քոնը ըլի։

—Եանի ո՞նց... ժպտեց շփոթւած Թէոսը—էս խօ անպէտք, դէն քցած հող ա։

—Ո՞նց թէ դէն քցած, ձայնն աւելի բարձրացրեց Աւագը—տօ քե՞զ ինչ. տէրութեանը չի՞. կուզի անպէտք կը թողայ, կուզի՝ կը վարի։

—Դէ ես էլ վարում եմ էլի...

—Փի՜է... բացականչեց Աւագը զարմացած—էն խա՞նչը՝ որ դժւել ես, ա՜դա։ Ընչի՞, բա չե՞ս իմանում, որ կազեօնի հողը թողալ չեն, որ վարես։

—Հլա կա՛ց, Աւա՛գ, ասաց Թէոսը, թողեց մաճը ու պահապանի օգնականին մի կողմը կանչեց, դու քո Աստւածը, եանի էս հողը քա՛րոտ, փշոտ, անպէտք ու աւարա հող չէ՞ր։

—Հա՛, դրուստ ա. յետո՞յ։

—Ետոյ էլ էն՝ որ ես թամզել եմ, հողը շուռ եմ տալիս, զարնանն, էլ կ'աղբեմ...

—Ե՛ա... արեց Աւագը—տօ ո՞նց թէ...

—Կա՛ց, կաց․ ընդհատեց Թէոսը—դէն քցած հող էր. հարցի անպէտք՝ ծառ՝ ո՛կի չը կայ վրէն. տէրութեանը ոչ մի խէր չը կար սրանից։ Դէ, ես էլ անհող, քաղցա՛ծ... ես վարում եմ, քրտինք թափում վրէն որ բեալքի մի քիչ հաց հանեմ... Բա դուք ինսաֆ չունէ՞ք, օղլուշաղի տէր չէ՞ք... Թէ մէջիցը, Մելիքի պէս զափթէի—վզիս տւէք, առէք. ամա դէ, ընը այ, խօ տեսնում ես, էս ձեռքերովս եմ տակռիքը մէկ-մէկ հանել, քարերը խստակել, ճլոտ հողը քըքըրել...

Տօ փի՜է... գոչեց տաքացած Աւագը—ո՞վ քեզ կանչեց որ անես. ո՞ւր էիր հողի վրէն քըրտինք թափում։

—Արի ու դորդն ասա, Աւա՛գ, հողը ո՞ւմն ա։

—Տէրութեանը։

—Էտ ա որ չես իմացել է... Հողը ով կայ՝ աշխատաւորինն ա, վրէն քրտինք թափողինը։ Հրէն այ, տէրութեանը աշխարքի չափ հող ունի անպէտք՝ վեր քցած. ամա դէ ես սկի հող չունեմ. հո՛ւմ էլ ուզածս ինչ ա որ, մէկ ըսէնց քարոտ, անպէտք կտոր...

Աւագը, իրաւ է, յուզւեց տեսնելով թէ որպիսի՜ հսկայական աշխատանք էր գործ դնում միամիտ Ուզուն-ախմախը՝ մի կտոր հող ձեռք բերելու համար, սակայն դրեթէ համոզւած էր որ «կազեօնի հողը»—լինէր իսկ ամբողջ աշխարհը միասին վերցրած—կազեօինի էր, հետեւապէս՝ անմատչելի։

—Գժւել ես, էն խաչը. ասաց նա քիչ մեղմ ձայնով—քանի շուտ ա Թէոս, գոմէշները քաշի ու գնա տեղդ. 'ի զուր կը չարչարւես, յետոյ գլխիդ կը տան ու էտ թափած քրտինքդ էլ ճրայ կերթայ... Հրէն այ, աբէշչիկն ուզում ա էգուց պրատակոլ սարքի վրէդ...

Ասաց ու գլուխը երերցնելով գնաց.

Թէոսը ժպտեց։ Մելիքի վրայ էլ տարէնը մի քանի անգամ պրատակոլ էին սարքում, բայց ամէն անգամ այդ «թուղթ» գրւածքները մնում էին առանց հետեւանքի եւ Մելիքը շարունակում էր հողը ձեռքին պահել, ծառերը ուզածին չափ կտրտել։

«Պրատակոլ սարքելը» անշուշտ՝ աբէշչիկի լեսնիչու պաշտօնն էր. սիրտի անէին։ Ո՞վ չի իմանում թէ քանի՜ քանի դէզ թղթեր են գրւում ու դարսւում պաշտօնատներում։ Բայց ո՞վ է նրանց բանի տեղ դնողը։ Գրւեց ու պրծաւ. շատ-շատ՝ մի քիչ տուգանք, մի երկու հայհոյեանք, մի քանի մանէթ էլ կաշառք—եւ ամէն ինչ կանգնէր։

Միւս կողմից չէ՞ որ նրան յաջողւել էր արդէն այնքա՜ն քրտինք թափել հողի վրայ, այնքա՜ն աշխատանք։ Ուրեմն բնական էլ էր որ հողի տէրն ինքն էր։ Ուրիշ ինչ կերպ. չէ՞ որ հողը աշխատաւորինն է եւ միմիայն աշխատաւորինը։ Պապենական այդպէս էր լսել, Մելիքն էլ հաստատեց այդ ու ամէն գիւղացի էլ նոյնը կը պնդէր։

digitised by A.R.A.R.@

Ու երբ Աւագը գնաց, Թէոսը միայն մի քանի րոպէ մնաց խոհուն ու տխուր։ Յետոյ թոթուեց իրեն, մաճը ձեռքն առաւ և վերսկսեց «հոռովելը»...

Այնուհետև մի ամբողջ շաբաթ, Թէոսն այլևս ոչ Աւագի երեսը տեսաւ, ո՛չ էլ աքէշչիկի։ Ենթադրում էր, որ ազատուել էր։

—Վախճըրին. մտածեց նա—էնքան էլ խօ քարասիրտ չե՞ն. հալբաթ լեսնիչուն ասել են, եկել—տեհել՝ որ վարածս հողը անպէտք, դէն քըցած, վատ էր ու ասել են «Թող մնայ Թէոսին, մեղք ա, օղլուշաղի տէր, հողը քիչ... Համ էլ մարդը գիտի չափ, ախր քրտինք ա թափել վըէն... Թող վայելի, խեղճ ա»...

Եւ ձեռնարկել էր հողի միւս մասն էլ մաքրելու, թէև արդէն ցուրտն սկսել էր և ձմեռը վրայ էր հասնում։ Մտածում էր գոնէ փշերից ու տատասկներից ազատել հողը այդ տարի, իսկ գարնանը մի անգամ ևս շուռ կը տար փխրացած հողը, գետնախնձոր կը ցանէր, ապա կ'աքէր, էլի կը վարէր... մի խօսքով մի լաւ արտ կը շինէր։

Բաւական օրեր անցան դրանից յետոյ։ Թէոսին այլ ևս չէի տեսնում։ Պատրաստւում էի գիւղից հեռանալ և մոռացել էի նրան։

Գնալուցս երկու օր առաջ, մի երեկոյ, երբ տուն էի մտնում, պատշգամբի մօտ կծկուած տեսայ մի փոքրիկ աղջիկ, որ երևի ներս էր մտնել ուզում, բայց չէր վստահանում։

—Ի՞նչ կայ, աղջի, հարցրի ես—ո՞ւմն ես ուզում.

—Քու խանումին. հիւանդ կայ։

—Ո՞վ է հիւանդը

—Հէրս... դողացնում ա.

—Հէրդ ո՞վ է։

—Թէոսը։

Հիւանդ։ Ի՞նչ էր եղել արդեօք այդ երկաթէ մարդուն, որ մի ամսից ի վեր, տաժանելի աշխատանքով՝ ուզում էր հողի տէր դառնալ։

Կինս մանկաբարձուհի, գիտէր նաև օգնել թեթև հիւանդներին. գիտէր գոնէ քիչ ամոքել նրանց ցաւերը։

Դեղատուփ էլ ունէինք։ Շտապով, անհրաժեշտ դեղեր վերցրինք և հետևեցինք փոքրիկ աղջկան։

Երբէք չեմ մոռանայ այն յուզիչ պատկերը, որին ներկայ գտնուեցի այն փոքրիկ, ցած, խոնաւ և մութ խրճիթի մէջ։

Անկողնի վրայ մեկնուել էր դունատ և նիհարած Թէոսը՝ խամրած աչքերով։ Կինը արտասուալից՝ կծկուել—նստել էր կողքին. երեխաները վերահաս ցրտից, մերկութիւնից և վշտից քար կտրած՝ մեզ էին նայում անկիւններից։

Ու երբ խնամում էինք թշուառին, պատմեց մեզ նա իր մարտիրոսութեան ահաւոր պատմութիւնը։

Խլել էին ձեռքից հողը։ Թողել էին որ մաքրէր, հերկէր, թողել՝ որ անպէտք հողը իր քրտինքով փափկացնէր, յամառ կամքով՝ բերրիութեան հասցնէր և ապա յանկարծ մի օր վճիռը տուել, անտառի պահապանները ուղարկել. ծեծել էին նրան, հողից դուրս շպրտել և թողել որ ջարդուած, ընկճուած՝ նստէր արտի կողքին ու լար և լա՛ր կսկծալից աղիողորմ ու յուսահատ...

Ի՞նչ կարող էինք անել այժմ վշտից և յուսաբեկութիւնից անկողին ընկած թշուառին, եթէ ոչ՝ միմիայն վշտանալ նրա հետ, յուզուել և զայրանալ թէ Թէոսի միամտութեան և թէ այս աշխարհի խիստ անիրաւ, չափազանց անարդար անհաւասարութեան և ընկերական զզուելի օրէնքների վրայ...

Հողի աշխատաւորը կարծել էր թէ քրտինքն ու աշխատութիւնը նոյնքան արժէք ունէր հողի տէր դառնալու համար, որքան բռնի ուժը կամ լրբութիւնը։ Սակայն նրան շատ ազդու կերպով հասկացրել էին, որ դեռ չեն եկել այդ օրերը և որ հողի տէրը նա է, ով ուժ ունի, ունի նաև զարնող ձեռք, կաշառելու, քծնելու վարպետութիւն, ունի մանաւանդ բռունցք. կոպիտ վայրենի, գազանային բռունցք...

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

## ՖԵԼԻԷՏՈՆ

## ՀԱՇՏԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎ

*Վօդեվիլ մի պատկերով եւ զանազան գործողութեամբ, որի մեծ մասը կատարւում է բեմի ետեւում։*

—

Մի մեծ հարուստ և կահաւորուած դահլիճ, ուր ժողովուած են չորս դիւժին պատգամաւորներ, որոնցից շատերը կովկասեան հագուստով, հաստ և երկայն բեխերով։ Բոլորը զինաթափ են արուած, և այդ երևում է դաշոյնների դատարկ պատեաններից։ Միւս մասը՝ եւ-

digitised by A.R.A.R.@

բազակեան հագուստով, ֆրակներով, որոնց վրայ երեւում են ակադեմիական զանազան կրծքանշաններ։

Այս վերջինները կանգնած են ձախ կողմում, առաջինները աջ, իսկ դրանց մէջ տեղը՝ քսան և հինգ գորոդովոյներ և զինուորներ հրացաններով ձեռքերին։ Աջակողմեանք խէթ խէթ նայում են ձախակողմեաններին

## ՏԵՍԻԼ Ա.

Ներս է մտնում պրիստաւը

Պրիստաւ։ Պարոններ, Смирно! Թոյլ տուէք հաւաքել ձեզ. բանի հատ էք այստեղ. (դառնալով գորոդովոյներից երկուսին) Իվանով, Սիմէոնով—հաշուեցէք—մէկը աջ, միւսը՝ ձախ։

Գորոդովոյ I-ին Въ шеренгу! гусь-комъ! (բոլոր պատգամաւորները միմեանց ետեւ են կանգնում, յիշում են մանկական «սարի գել եմ կը տանեմ» աղաչանք չոքան եմ չեմ տայ» խաղը)։

Գորոդովոյ I-ին համրելով. первый, второй, первый, втор ій. первый, второй... 24 հատ են, ваше благородіе!

Գորոդովոյ II. այստեղ աջում ինչ որ շատ են, ինչ կը հրամայէք անել—դուրս քցե՞մ...

Պրիստաւ. Ոչ, այդպէս էլ պէտք է լինեն։ Ну, պարոններ, այժմ ձեզ զգուշացնում եմ, երբ կը մտնի Նախագահը դուք պարտական էք իսկոյն ծունկ չոքել և, ըստ արեւելեան սովորութեան, գլուխներդ կացրէք յատակին—երբ Նախագահը կասի բարձրացէք—դուք գոռացէք «Մեզայ Աստուծոյ, մեզայ ձեզ, ներեցէք մեզ, մենք մեղաւոր ենք, մենք հաշուել ենք»

Այն ժամանակ նախագահը կասի «շատ ուրախ եմ. ուրեմն ցոյց տուէք այդ, որ ես հաւատամ և մի արձանագրութիւն կազմեմ»։ Դուք իսկոյն բարձրացէք և միմեանց վիզ և գիրկ ընկնելով համբուրեցէք, համբուրեցէք, համբուրեցէք մինչև որ ես կասեմ, будетъ! смирно! այն ժամանակ դուք վերջացրէք համբուրուել և կանգնեցէք խաղը. երեսներից պէտք է լինի ժպիտ, ուրախութիւն, մի խօսքով նաշտակական արտայայտութիւն։ Յետոյ Նախագահը կասի «ուրեմն հաշտ էք» դուք դարձեալ գոռացէք «այո հաշտ, մենք եղբայրներ ենք»։

Աղեքսանդր Խատիսեան (նրան ընդհատելով) ներեցէք, որ ձեզ ընդհատում եմ, ասացէք խնդրեմ, իսկ ճառ ե՞րբ պիտի ասենք։

Պրիստաւ, Ո՛չ մի ճառ, ոչ մի բառ, բացի այն ինչ որ ես ասացի ձեզ—հասկացաք

Խատիսով. հասկացայ—բայց ես մի լաւ, շատ լաւ ճառ եմ պատրաստել, ինչ անեմ ես.

Պրիստաւ. Это не мое дѣло, ձեր ճառը կասէք յետոյ, մի ուրիշ տեղ։

Յետոյ նախագահը կասի—«ուրեմն կարելի է կազմել արձանագրութիւն» ասեցէք «այո արձանագրութիւն, արձանագրութիւն»։ Այդ ժամանակ ձեզ կը լուսանկարեն—լուսանկարի համար կարժենայ 50 րուբլի, որը խնդրեմ հէնց այժմ վճարել, որովհետև ձեզ յետոյ ով գիտէ որտեղ գտնենք.

Պատգամաւորներից մէկը—Մենք այստեղ կը լինենք, մեր հասցէն ձեզ յայտնի կը լինի։

Պրիստաւ. Ո՞վ գիտէ, դա Աստծու բանն է, կարելի է պատահի, որ ձեզնից շատերին ուրիշ տեղ տանեն։

(Պատգամաւորները խորհրդաւորութեամբ միմեանց երես են նայում)։

Պրիստաւ, Ну, պարոններ, ժամանակ մի կորցնէք, փողը շուտ հաւաքեցէք։

Պատգամաւորներից մէկը—Աղէքսանդր Ագաֆոնիչ, խնդրեմ վճարեցէք դուք մեր տեղ, մենք ձեզ յետոյ կը վերադարձնենք:

Աղեքսանդր Ագաֆոնիչ—Ոչ, պարոններ, վճարեցէք ինքներդ, բաւական է որքան ես մինչև այժմ ձեր տեղ վճարեցի։ Վերջը, դուք ինձ էլ ձեր օրն էք գցելու։

Խատիսեան. Մենք հիշտ է 20 միլիոնը ստացանք, բայց դեռ ես փողը չէ բաժանուած, ես ձեզ մուրհակ կը տամ։

Միւսները եւ մենք... և մենք... մուրհակ...

Աղեքսանդր Ագաֆոնիչ—Ձեր մուրհակները այլ ես գին չունեն, նրանք չեն գնվում (պրիստաւին) համեցէք իմ կողմից 50 րուբլին։ (Տալիս է պրիստաւին)։

(Աջ կողմում խրախճանում. այնտեղ էլ նոյնն է նկատւում. բոլորը ժողովւած են մի ծերունու շուրջ, որին «Հաջի, Հաջի» են կոչում)։

Հաջին (մոտենալով պրիստաւին) «Պատարագին, փրիստաւ, վօտ տիբէ за всѣ 1200 մանաթ, и сто մանաթ տեբէ «նա չայ» отъ Հաջի։

Պրիստաւը (ուրախացած) Ты, Гаджы, великій человѣкъ, спасибо (և սխմում է Հաջու ձեռքը)։

Հաջի—Ա էտօ սօօ մանէթ պասպաթինամ—գարադավօյամ и սալթաթամ։

(Գորոդովոյներ և զինուորներ միաձայն)

Здравія желаемъ Ваше.. ство-ура!.. Гаджи!.. ура!..

(Մտնում է մի զինուորական)

Զինուորական. Смирррно... գալիս է նախագահը։

Պրիստաւ. Պարոններ, իսկ յիսունական րուբլի...

(Մտնում են զինուորականներ զանազան համազգեստներում և վերջը ինքը նախագահը, պատգամաւորները իսկոյն չոքում են և գլուխները գետնին խփում։

ՍՏՈՐԱԳԻՐ

(ՎԱՐԱԳՈՅՐԸ ԻՋՆՈՒՄ Է)

## ԳՈՍՏ-ԱՐԿՂ

Խմբագրութիւնս ստացել է մի պարոնից 4 ռուբլի տարեկան բաժանորդագին Կարբի գիւղի ծխական դպրոցին մի օրինակ «Աշխատանք» ուղարկելու, որը և ուղարկեցինք։

Տպարան «ՀԵՐՄԷՍ»

Խմբ. հրատ. ԱՇՈՏ ԱԹԱՆԱՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@